ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

1.Տեղեկատվություն Ընկերության մասին

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է 1969թ. որպես «Արփասևանշին» հատուկ մասնագիտացված շինարարական կազմակերպություն: 1995թ.-ին վերակազմավորվել է ՀՀ էներգետիկայի նախարարության «Արփա-Սևան» ՓԲԸ իսկ 1998թ.-ին «Արփա-Սևան» ԲԲԸ:
Ընկերությունը գրանցված է պետական ռեգիստրի Արաբկիրի ստորաբաժանման կողմից գրանցման համարը՝ 264.120.00831 գրանցման ամսաթիվը 16.02.1995թ :

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 51 130 000 ՀՀ դրամ: Ընկերության հիմնական գործունեությունը կապիտալ շինարարության իրականացումն է քաղաքաշինության էներգետիկական հիդրոտեխնիկական կապի և տրանսպորտային ոլորտներում:

19.01.2011թ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը ցուցակվել և ընդգրկվել են Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում և թույլատրել առևտրին ցուցակված բաժնետոմսերի հասցեական գործարքների և ռեպո գործարքների հարթակներում:

Սկսած 2011թ.-ից Ընկերությունը հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2012թ. N 1769-Ա որոշմամբ հավանության արժանացած Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին:

2. Արտաքին աուդիտն իրականացնող անձը

Ընկերության աուդիտը իրականացնում է «ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը:
«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ գտնվելու վայրն ՀՀ ք. Երևան 0014 Պ. Սևակ 8 Հեռ.՝(374 60) 60 70 80
www. tmaudit.am «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ այլ մասնագիտական միություններին չի անդամակցում:

3. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կառավարման մյուս մարմիններն են՝ խորհուրդը վերստուգող հանձնաժողովը վարչությունը և գլխավոր տնօրենը :
Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանված է 8 անդամից:
Ընկերության վերստուգող հանձնաժողովը կազմված է 3 անդամից:
Ընկերության վարչության կազմը սահմանված է 10 անդամից:

Ընկերության կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ներքոհիշյալ աղյուսակներում:

3.1.Խորհուրդ և վարչություն

Աղյուսակ 1

	Ազգանուն անուն հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Հակոբյան Ռաֆայել Արմենի	ք. Երևան Աղասու փող. 2/5 Քանաքեռ Զեյթուն	Խորհրդի նախագահ		0
2.	Հակոբյան Պարույր Հակոբի	ք.Երևան. Անտառային փող. 122/7 տուն	Խորհրդի անդամ Գլխ. տնօրեն Վարչության նախագահ	«Մեղմ զեփյուռ» ՍՊԸ և «Զրասահք» ՍՊԸ- տնօրեն «Արփա-Սևան» ԲՀ - հոգաբարձուների խորհրդի նախագահ	11 410հատ/ 55.7892 %
3.	Նավասարդյան Կարինե Արշավիրի	ք. Երևան Զ. Սարկավագի 123.36	Խորհրդի անդամ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ	2673հատ / 13.0696 %
4.	Հակոբյան Արմեն Ռաֆիկի	ք. Երևան Զ.Սարկավագի 19/ա	Խորհրդի անդամ Գլխ.տնօր.1-ին տեղ. գլխ. ճարտ. վարչության անդամ	«Բազենք» ՓԲԸ -տնօրեն խորհրդի անդամ «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի նախագ	505հատ / 2.4692 %
5.	Վարդանյան Զորիկ Հովհաննեսի	ք. Երևան Նորքի 8-րդ զանգ.29շ 33բն	Խորհրդի անդամ Պլանա-տնտեսագ. բաժնի պետ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ խորհրդի անդամ «Արփա-Սևան» ԲՀ - հոգաբարձուների խորհրդի անդամ	34հատ / 0.1662 %
6.	Պետրոսյան Ռաֆայել Կառլենի	ք. Երևան Ա- Սերոբի 7-29	Խորհրդի անդամ Մարքեթինգի ԲՊ տեղակալ	-	8հատ/ 0 03912%
7.	Աղայան Ռուզան Պավլիկի	ք. Երևան Ավան Դուրյան 44-50	Խորհրդի անդամ ճարտարա գետ	-	8հատ/ 0 03912%
8.	Սարյան Սուրեն Վլադիմիրի	ք. Երևան Թումանյան 39 բն. 10	Խորհրդի անդամ	-	0
9.	Փարսյան Սեդա Սերբիայի	ք. Երևան Գր. Արծրունի 92-17	Գլխ. հաշվապահ վարչության անդամ	«Դիլիջանի առողջարան» ԲԲԸ «Զրասահք» ՍՊԸ և «Սի-լաբ» ՍՊԸ գլխ. հաշվապահ	26 հատ / 0.1271 %

10.	Հակոբյան Վահրամ Ջանիկի	ք.Երևան Նորք 9փ.26տուն	գլխ.տնօրենի տեղակալ ֆինանս գծով վարչության անդամ	«Բազենք» ՓԲԸ - փոխտնօրեն ֆինանսական գծով «Ջրասահք» ՍՊԸ - փոխտնօրեն	0
11.	Ղազարյան Արտաշես Սոսիկի	ք.Երևան Սարկավագի 121 բն. 15	Մարքեթինգի բաժնի պետ վարչության անդամ	-	42հատ / 0.2054 %
12.	Աղեկյան Աշխեն Նորիկի	ք.Երևան Գուլակյան 80/48	Կադրերի բաժնի պետ վարչության անդամ	«Դիլիջանի առոջարան» ԲԲԸ վերստուգող հանձնաժ. նախագահ «Բազենք» ՓԲԸ և «Ջրասահք» ՍՊԸ - Կադրերի ԲՊ	14հատ / 0.0685 %
13.	Փառլաքյան Հարություն Կորյունի	ք.Երևան Այգեստան 9փ.41շ.28բն.	Գլխավոր մասնագետ վարչության անդամ	-	13հատ / 0.0635 %
14.	Այվազյան Գեորգի Արմենակի	ք.Երևան Գյուլիքեխվյան նրբ. 2շ.56բն.	Գլխ. էներգետիկ վարչության անդամ	-	0
15	Հովհաննիսյան Գրիշա Վարանցովի	ք.Երևան Ա. Ավետյան 8-22	Առաջատար մեխանիկ վարչության անդամ	-	0

3.2. Վերստուգող հանձնաժողով

Աղյուսակ 2

	Ազգանուն անուն հայրանուն	Բնակության (հաշվառման) վայրը	Զբաղեցրած պաշտոնը		Անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը
			ընկերությունում	փոխկապակցված ընկերությունում	
1.	Հայկարամյան Անահիտ Աշոտի	ք. Երևան Գայի պողոտա 27շ. բն. 50	Առաջատար հաշվապահ վերստուգող հանձնաժողովի նախագահ	-	0
2.	Եղիյան Սպարտակ Սերյոժայի	Ք.Երևան Կոմիտասի 19/8-16	Իրավաբանական բաժնի պետ	-	144հատ / 0.7041 %
3.	Վարդանյան Արտակ Վարուժանի	ք. Երևան Ռաֆֆու փ. 83շ. 1բն.	Տնտեսագետ ներքին աուդիտ	-	0

Տեղեկություններ Ընկերության կառավարման մարմնի անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ:
2018թ. հունիսի 21-ին Ընկերության խոշոր բաժնետեր Հակոբ Ռաֆիկի Հակոբյանը որին պատկանում էին 11286 հատ /55 18 տոկոս/ բաժնետոմսեր իրեն պատկանող բոլոր բաժնետոմսերը նվիրաբերել է նույն Ընկերության բաժնետեր՝ իր հետ փոխկապակցված անձ Պարույր Հակոբի Հակոբյանին:

Ընկերության խոշոր բաժնետեր գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյանի հետ որպես միևնույն ընտանիքի անդամ փոխկապակցված անձիք են ընկերության կառավարման մարմնի հետևյալ անդամները՝

- Հորեղբայրը - Ընկերության գլխավոր ճարտարագետ խորհրդի անդամ՝ Արմեն Հակոբյանը
- Հորեղբոր որդին - Ընկերության խորհրդի նախագահ՝ Ռաֆայել Հակոբյանը:
- Հորաքրոջ դուստրը – Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Հայկարամյան:

Վերջին հինգ տարվա ընթացքում ընկերության կառավարման մարմինների անդամների նկատմամբ դատական գործեր չեն հարուցվել պետական որևէ կառավարման մարմնի կողմից պատասխանատվության չեն ենթարկվել և առնչություն չեն ունեցել որևէ սնանկության լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացի հետ:

- Շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև բացակայում է:

4. Տեղեկություններ դուստր և փոխկապակցված անձանց վերաբերյալ

4.1.«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը՝

- 15.06.2004թ. հիմնադրել է «Արփա-Սևան նախագիծ» փակ բաժնետիրական դուստր ընկերությունը: Հասցեն `0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

«Արփա-Սևան» ԲԲԸ տիրապետում է դուստր ընկերության բաժնային արժեթղթերի 100 տոկոսին:
«Արփա-Սևան» ԲԲԸ և «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները փոխկապակցված անձիք չեն:
«Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմինների անդամները և նրանց հետ փոխկապակցված անձինք չեն հանդիսանում «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերեր:

- 23.08.2010թ. հիմնադրել է «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամը:
  Հասցեն՝ 0012. ք. Երևան Վ. Վաղարշյան -20:

4.2. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձինք են՝

1. «Դիլիջանի առողջարան» ԲԲԸ
2. «Բազենք» ՓԲԸ
3. «Ձրասահք» ՍՊԸ
4. «Մեղմ Ձեփյուռ» ՍՊԸ
5.. «Սի-լաբ» ՍՊԸ
6. «Ա-Ս էներջի» ՍՊԸ
7. «Ինովեյթիդ ընդ Դիվելոփդ Ագրո Սիսթեմս» ՍՊԸ
8. «Ա-Ս Ինվեսթմենթս» ՍՊԸ

5. Խոշոր բաժնետերերը

Ընկերության խոշոր բաժնետերերն են՝

1.Հակոբյան Պարույր Հակոբի - տիրապետում է 11 410 հատ բաժնետոմսի որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 55 7892 %-ը:

2. Նավասարդյան Կարինե Արշավիրի - տիրապետում է 2673 հատ բաժնետոմսի որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 13.0696 % -ը:

Բոլոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տալիս են ձայնի միևնույն իրավունքը:

6. Աշխատակիցները

Ընկերության աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են թիվ -3 աղյուսակում:

Աղյուսակ 3

	Տարեթվերը			
	2015թ	2016թ	2017թ	2018թ
Աշխատողների միջին տարեկան թվաքանակը մարդ	336	380	410	391
որից ղեկավարներ	46	42	42	43

7.Արտոնագրեր և լիցենզիաներ

1.ՀՀ Քաղաքաշինության նախարարություն

ԼԻՑԵՆԶԻԱ 7496
ՔԱՂԱՔԱՇԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
(Բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների)
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 01
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 02
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 03
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 04

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

1.5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 7496 - 05
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԿԱՊԻ
Տրված է 14.02.2003թ. գործողության ժամկետը -անժամկետ

2. ԼԻՑԵՆԶԻԱ 16071
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
/ բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների/
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 16071 - 02
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 16071 - 03
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

2.3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ N 16071 - 04
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ
Տրված է 27.02.2015թ. գործողության ժամկետը -անժամկետ

3.Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԼԻՑԵՆԶԻԱ
Պայթուցիկ նյութերի պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման
ՊՆՊՍԱՊԱ N 32
Տրված է 11.02.2013թ. գործողության ժամկետը - անժամկետ:

4. TUV InterCert Saar Սերտիֆիկատ N 17-Q-5010001-TIC
Հիդրոէներգետիկ կառույցների էներգետիկ համակարգերի շինարարության արտադրության շահագործման և թունելների նկատմամբ ներդրված ԻՍՈ 9001:2015:
Տրված է 19.10.2017թ. ուժի մեջ է մինչև 18.10.2020թ.

5. Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ Սերտիֆիկատ N 001/E-003-0002-2017 Բնակելի հասարակական և արտադրական տրանսպորտային հիդրոտեխնիկական էներգետիկ կապի ոլորտներում շինարարության պայթուցիկ նյութերի պայթեցման սարքավորումների և պայթեցման աշխատանքների նկատմամբ ներդրված ԻՍՈ 14001:2015 :
Տրված է 04.12.2017թ. ուժի մեջ է մինչև 04.12.2020թ.

8. Բիզնեսի արդյունքների նկարագիրը

Հիմնական գործունեությունը և շուկաները

2018թ. ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից հասույթը կազմել է՝ 3 812 614 հազ.դր. որոնցից առավել կարևոր աշխատանքների և մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են թիվ -4 աղյուսակում:

Աղյուսակ 4

	Պատվիրատու կազմակերպության և կառույցի անվանումը	հազ.դր.
1	Աշխատանքների կատարումից և «Արփա-Սևան» թունելի շահագործումից հասույթը կազմել է որից՝	3 711 890.8
1.1	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե «Արփա-Սևան» ջրատարի թիվ 2 թունելի առանձին հատվածների վերականգնման և վերակառուցման աշխատանքներ	1 496 317.7
1.2	«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» «ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցում »	286 456.8
1.3	«Ջրային տնտեսության ՕԻԳ ՊՀ» «Խոսրով և Վեդի գետերի ջրառ հանգույցների կառուցում»	563 115.9
1.4	« Կրթական ծրագրերի կենտրոն ՕԻԳ ՊՀ»	175 058.5
1.5	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ «Գնդևազի ջրավազանը սնուցող ջրանցքային համակարգի վերականգնման և այլ շինարարական աշխատանքներ »	959 533.2
1.6	«Բազենք» ՓԲԸ «Եղեգիս-1ՓՀԷԿ-ի ձկնանցարանի կառուցում»	25 415.8
1.7	«ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ տեղակայման լրակազմ համաձայն արձանագրության»	3 279.3
1.8	Պարիսպի կառուցում	31 214.4
2	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե «Արփա-Սևան» թունելի շահագործում «Որոտան-Արփա-Սևան» թունելի պահպանման ծառայությունների մատուցում	171 499.2
3	Վաճառքից հասույթ	68 671.8

4	Այլ ծառայությունների մատուցումից հասույթ	32 051.4

Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքները և մատուցած ծառայությունները իրացվում են ներքին շուկայում:

9.Հիմնական միջոցները

31.12.2018թ. դրությամբ ընկերության հիմնական միջոցների արժեքը կազմել է 6 184 515 հազ. դր. կուտակված մաշվածությունը՝ 3 610 299 հազ. դր. հաշվեկշռային արժեքը 2 574 216 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմել է 58.4%:

Ըստ առանձին դասերի հիմնական միջոցների արժեքի հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ - 5 ում:

Աղյուսակ 5
հազ. դր.

Դասի անվանումը	Արժեքը	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռ. արժեքը	Մաշվածքը %
Շենքեր և կառուցվածքներ	1 028 632	278 002	750 630	27.0
Մեքենա - սարքավորումներ	2 878 250	2 165 350	712 900	75.2
Տրանսպորտային միջոցներ	1 649 079	1 067 228	581 851	64.7
Արտադրական և տնտեսական գույք	73 508	55 663	17 845	75.7
Այլ հիմնական միջոցներ	59 511	45 282	14 229	76.1
Հողամասեր	496 761		496 761	
Ընդամենը հիմնական միջոցներ 31.12.2018թ.	6 185 741	3 611 525	2 574 216	58.4

Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են՝

Ընդամենը հիմնական միջոցներ 31.12.2017թ.	6 153 008	3 303 652	2 849 356	53.7
Նախորդ տարվա համեմատ աճը	32 733	307 873	-275 140	

Ընկերության հիմնական միջոցների սկզբնական արժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 0.51 % որը կազմում է 32 733 հազ.դր.:

Հիմնական միջոցների արժեքի աճը հիմնականում տեղի է ունեցել ընկերության կողմից նոր հիմնական միջոցների ձեռք բերման ինչպես նաև գործող շինարարական մեքենաների և տրանսպորտային միջոցների հիմնանորոգման և արդիականացման արդյունքում:

Վերջին հինգ տարիների ընթացքում Ընկերության կողմից ձեռք բերված հիմնական միջոցների և արդիականացման վրա կատարված ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ - 6 ում:

Աղյուսակ 6
հազ.դր.

Հիմնական միջոցների դասը	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Մեքենաներ և սարքավորումներ	175 211	123 268	37 186.5	471 791	194 183.5
Տրանսպորտային միջոցներ	25 982	23 867	69 589	328 235	32 094.8
Այլ հիմնական միջոցներ	7 035	1 1530	7 261	15 039	13 512.8
Ընդամենը	397 394	210 608	200 118	815 065	239 791.1

Ընկերության տրամադրության տակ գտնվող էական մեծություն կազմող հիմնական միջոցը դա ք. Երևան Վ.Վաղարշյան – 20 հասցեում գտնվող 1840.1 քառ. մ. տարածքով չորս հարկանի վարչական շենքն է որի հաշվեկշռային արժեքը իր զբաղեցրած հողատարածքի հետ միասին կազմում է 544 321 հազ.դրամ:

Ընկերությանը պատկանող էական մեծություն չկազմող բայց Ընկերության համար կարևոր նշանակություն ունեցող շենքերից շինություններից և հողատարածքներից են՝

- ք. Երևան Արտաշիսյան -106 հասցեում գտնվող 903.2ք.մ. անշարժ գույքը 0.60637 հա հողատարածքով որը օգտագործվում է ընկերության ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման վերանորոգման արհեստանոցների պահեստների համար;
- ք. Երևան Արտաշիսյան -105 հասցեում գտնվող 1606.7ք.մ. անշարժ գույքը 1.78845 հա հողատարածքով որը օգտագործվում է որպես ապրանքանյութական արժեքների պահեստավորման բազա վերանորոգման արհեստանոց բետոնի պատրաստման արտադրամաս և այլն;

Բոլոր հիմնական միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Ընկերությանը:

Սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող գույքից՝

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ որպես վարկային և բանկային երաշխիքների պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված է ք. Երևան Վ.Վաղարշյան – 20 հասցեում գտնվող վարչական շենքը;

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ում որպես վարկային և բանկային երաշխիքային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման երաշխիք գրավադրված են Ընկերության խոշոր բաժնետեր Պարույր Հակոբյանին պատկանող 11 286 հատ անվանական բաժնետոմսերը;

Սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող ներքոհիշյալ անշարժ և շարժական գույքերը՝

Արտաշիսյան 105 հասցեով շենք շինությունները;
էքսկավատոր Caterpillar M330D2L երկու հատ;
Ինքնաթափ MAN TGS 41.480 երկու հատ;
Գլդոն Caterpillar CS 74 B երկու հատ;
Ավտոկռունկ KAMAZ-65115 KS-45717K-1

Կիսակցորդ MELLER MHKS 23/42 30m3
Քարշակ MAN TGS-33.540
էքսկավատոր Caterpillar 428F
Բուլդոզեր Caterpillar D6R;

Գրավադրված հիմնական միջոցների օգտագործման սահմանափակումները կայանում է նրանում որ առանց գրավառուի համաձայնության ընկերությունը չի կարող այլ տեղ գրավ դնել վարձակալության հանձնել կամ օտարել այդ հիմնական միջոցները:

10. Ֆինանսական վերլուծություն

10.1. Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծություն

Ֆինանսական վիճակի և դրա փոփոխության վերլուծությունը իրականացնելու համար ընկերության հաշվեկշիռը ներկայացվում է ներքոհիշյալ տեսքով՝

Աղյուսակ 7

Ցուցանիշների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին		Նախորդ ժամանակաշրջանի վերջին		Աճը	Աճի տեմպը
	հազ.դր.	%	հազ.դր.	%	հազ.դր.	%
1.Ակտիվներ	5 895 045	100.0	6 035 251	100.0	-140 206	97.7
1.1. Ոչ ընթացիկ ակտիվներ	3 766 812	63.9	3 854 016	63.9	-87 204	97.7
1.2.Ընթացիկ ակտիվներ	2 128 233	36.1	2 181 235	36.1	-53 002	97.6
1.2.1. Պաշարներ	390 078	6.6	561 106	9.3	-171 028	69.5
1.2.2.Դեբիտորական պարտքեր	1 341 956	22.8	992 677	16.4	349 279	135.2
1.2.3.Դրամական միջոցներ	396 199	6.7	627 452	10.4	-231 253	63.1
2.Պասիվներ	5 895 045	100.0	6 035 251	100.0	-140 206	97.7
2.1.Սեփական Կապիտալ	4 786 492	81.2	4 617 684	76.5	168 808	103.7
2.2.Փոխառու կապիտալ	1 108 553	18.8	1 417 567	23.5	-309 014	78.2
2.2.1. Ոչ ընթացիկ պարտավորություններ	119 923	2.0	226 774	3.8	-106 851	52.9
2.2.2. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	307 615	5.2	184 526	3.1	123 089	166.7
2.2.3.Կրեդիտորական պարտք	681 015	11.6	1 006 010	16.7	-324 995	67.7

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից հաշվետու ժամանակաշրջանի վերջում նախորդ տարվա համեմատ Ընկերության հաշվեկշռի ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների կառուցվածքը և դինամիկան բնութագրող ցուցանիշներում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել պասիվների՝ ինչպես կառուցվածքում այնպես էլ դրանց դինամիկան բնութագրող ցուցանիշներում մասնավորապես՝
Սեփական կապիտալը բացարձակ արժեքով նախորդ տարվա համեմատ աճել է 168 808 հազ.դր. կամ 3.7 % որի տեսակարար կշիռը պասիվների կառուցվածքում նախորդ տարվա 76.5 % համեմատ աճել է 4.7 % և կազմել 81.2 % իսկ պարտավորությունների տեսակարար կշիռը 23.5% ից նվազել է և կազմել 18.8% պարտավորությունների գումարը նախորդ տարվա համեմատ նվազել է 309 014 հազ.դր. կամ 21.8 % այդ թվում՝

- Ոչ ընթացիկ պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ նվազել են 106 851 հազ.դր. կամ 47.1% :
- Ընթացիկ ֆինանսական պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 123 089 հազ.դր. կամ 66.7% :
- կրեդիտորական պարտավորությունները նախորդ տարվա վերջի համեմատ նվազել են 324 995 հազ.դր. կամ 32.3% :

10.2. Ֆինանսական կայունության վերլուծություն

Ֆինանսական կայունության վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

10.2.1. Ֆինանսական անկախության գործակից:

$$Գ_1 = 4\,786\,492 / 5\,895\,045 = 0.81$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:
Ցուցանիշի 0.81 արժեքը ցույց է տալիս որ ընկերությունն իր գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է սեփական կապիտալի հաշվին:

10.2.2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:

$$Գ_2 = 1\,108\,553 / 4\,786\,492 = 0.23$$

Ցուցանիշի 0.23 արժեքը ցույց է տալիս որ ընկերության պարտավորությունները սեփական կապիտալի միավորի հաշվով գտնվում են ցածր մակարդակում և որ ընկերությունը քիչ է օգտվում փոխառու կապիտալից:

10.2.3. Ինքնավարության գործակից:

$$Գ3 = 4\,906\,415 / 5\,895\,045 = 0.83$$

Ինքնավարության գործակցի 0.83 արժեքը ցույց է տալիս որ Ընկերության միջոցների հիմնական մասը ձևավորվել է երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հիմնականում՝ սեփական կապիտալի հաշվին:

10.2.4. Գործող կապիտալ:

$$Գ_4 = 2\,128\,233 - 988\,630 = 1\,139\,603 \text{ հազ.դր.}$$

Գործող կապիտալի արժեքը ցույց է տալիս որ ընթացիկ ակտիվները ապահովված են սեփական կապիտալով:

10.2.5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$$Գ_5 = 1\,139\,603 / 2\,128\,233 = 0.54$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

10.2.6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

$Գ_6$ = 1 139 603 / 327 726 = 3.48

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:

10.2.7. Սեփական կապիտալի մանևրայնության գործակից:

$Գ_7$ = 1 139 603 / 4 786 492 = 0.24

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.5:
Ցուցանիշի 0.24 արժեքը ցույց է տալիս որ ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցները ամբողջությաբ չեն օգտագործվում:

10.2.8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

$Գ_8$ = 2 901 942 / 5 895 045 = 0.49

Այս ցուցանիշի 0.49 արժեքը (ընդունելի փոքրագույն արժեքը 0.5) ցույց է տալիս որ ընկերության արտադրական պոտենցիալը գտնվում է բավարար վիճակում:

10.3. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են՝

10.3.1. Ընթացիկ իրացվելիության գործակից

$Գ_9$ = 2 128 233 / 988 630 = 2.15

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ 2.15 ցույց է տալիս որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ամբողջությամբ ապահովված են ընթացիկ ակտիվներով:

10.3.2. Արագ իրացվելիության գործակից:

$Գ_{10}$ = 1 108 553 / 988 630 = 1.82

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:
Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը և ցույց է տալիս որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ապահովված են առավել իրացվելի ակտիվներով:

10.3.3. Բացարձակ իրացվելիության գործակից:

$Գ_{11}$ = 396 199 / 988 630 = 0.4

Այս գործակցի ցանկալի արժեքը ընկած է (0.2; 0.5) թվերի սահմաններում:

10.4. Ֆինանսական արդյունքների վերլուծություն

Ընկերության ֆինանսական արդյունքների և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

	Ցուցանիշների անվանումը	2018թ.		2017թ.	
		հազ.դր	%	հազ.դր	%
1	Հասույթ	3 812 614	100	5 818 547	100
2	Վաճառքի ինքնարժեք	-3 059 137	80.2	-4 444 694	76.4
3	Համախառն շահույթ	**753 477**	**19.8**	**1 373 853**	**23.6**
4	Այլ եկամուտներ (ծախսեր)	60 910	**1.6**	69 460	**1.2**
5	Իրացման ծախսեր	-672	0.0	-296	0.0
6	Վարչական ծախսեր	-217 576	-5.7	-243 631	-4.2
7	Այլ ծախսեր	-85 224	-2.2	-123 011	-2.1
8	Գործառնական գործունեությունից շահույթ	**510 915**	**13.4**	**1 076 375**	**18.5**
9	Ֆինանսական եկամուտներ	102 608	2.7	87 419	1.5
10	Ֆինանսական ծախսեր	-16 853	0.4	-40 608	-0.7
11	Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	-760	0.0	-138	0.0
12	Շահույթը մինչև հարկումը	**595 909**	**15.6**	**1 123 048**	**19.3**
13	Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-79 872	-2.1	-233 692	-4.0
14	Զուտ շահույթ	516 038	13.5	889 356	15.3
15	Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	516 038	13.5	889 356	15.3
16	որից մայր կազմակերպության սեփականատերերին	516 038	13.5	889 356	15.3
17	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	25.23		43.49	

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից կատարած աշխատանքների մատուցած ծառայությունների իրացումից հասույթը նախորդ տարվա 5 818 547 հազ.դր. համեմատ նվազել է 2 005 933 հազ.դր.-ով և կազմել՝ 3 812 614 հազ.դր:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության գործառնական գործունեությունից շահույթը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 565 460 հազ.դր. կամ 52.5% և կազմել է 510 915 հազ.դր.: Նշված նվազեցումը հիմնականում պայմանավորված է Ընկերության կողմից կատարված շինարարական աշխատանքների ծավալների 2 005 933 հազ.դր. կամ 34.5% նվազմամբ՝ և այդ աշխատանքների ինքնարժեքի աճով որի տեսակարար կշիռը հասույթից կազմել է 80.2 % նախորդ ժամանակաշրջանի 76.4 % դիմաց: Արդյունքում շահույթը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 373 319 հազ.դր. և կազմել է 516 0387 հազ.դր.: Շահութաբերությունը կազմել է 13.5% :

10.5.Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծություն

Գործարար ակտիվության և կառավարման արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս գնահատել թե որքանով է Ընկերությունը արդյունավետ օգտագործում իր միջոցները: Վերլուծության այս փուլում առանձնացվում են հետևյալ ցուցանիշները՝

1. Շրջանառելիության ցուցանիշներ
2. Շահութաբերության ցուցանիշներ

10.6. Ակտիվների շրջանառելիության վերլուծություն

Շրջանառելիության գործակիցների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

	Ցուցանիշների անվանումը		Շրջանառելիության գործակիցների		
			Արժեքները		Փոփոխության տեմպը %
			2018թ.	2017թ.	
1	Ակտիվների շրջանառելիության գործակից	$Գ_{12}$	0.64	1.06	60.4
2	Սեփական կապիտալի շրջանառ.գործակից	$Գ_{13}$	0.81	1.36	59.6
3	Արտադրության միջոցների շրջանառելիության գործակից	$Գ_{14}$	1.24	1.60	77.5
4	Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակից	$Գ_{15}$	1.41	1.95	72.3
5	Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակից	$Գ_{16}$	1.77	3.06	57.8
5.1	Ընթացիկ ակտիվների շրջապտույտի տևողությունը օրերով	$Գ_{17}$	203	118	-

6	Գործող կապիտալի շրջանառելիության գործակից	$Գ_{18}$	3.58	5.47	65.4
6.1	Գործող կապիտալի շրջապտույտի տևողությունը օրերով	$Գ_{19}$	101	66	-
7	Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակից	$Գ_{20}$	-	-	-
8	Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից:	$Գ_{21}$	3.01	6.60	45.6
8.1	Դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը՝	$Գ_{22}$	120	55	-
9	Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	$Գ_{23}$	4.52	7.79	58.02
9.1	Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը օր	$Գ_{24}$	80	46	172
10	Պաշարների շրջանառելիության գործակից	$Գ_{25}$	10	9	112

Ինչպես երևում է աղյուսակից Ընկերության ակտիվների շրջանառելիության վիճակը բնութագրող ցուցանիշները նախորդ տարվա համեմատ զգալիորեն վատացել են որը հիմնականում պայմանավորված է հաշվետու տարում հասույթի նվազմամբ:

10.7. Շահութաբերության վերլուծություն

Կապիտալի շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքները և դրանց փոփոխության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

	Շահութաբերության գործակիցների՝				
	Ցուցանիշների անվանումը		Արժեքները		Աճի տեմպը %
			2018թ.	2017թ.	
1	Ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{26}$	0.0865	0.1622	53.3
2	Սեփական կապիտաիլ շահութաբերության գործակից	$Գ_{27}$	0.1097	0.2078	52.8
3	Իրացման շահութաբերության գործակից	$Գ_{28}$	0.1353	0.1528	88.5
4	Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից	$Գ_{29}$	0.2425	0.4077	59.5

11. Շահույթի բաշխումը և կանխատեսումը

Վերջին հինգ տարվա ընթացքում Ընկերության զուտ շահույթի օգտագործման և շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարների վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տարեթվերը				
	2013թ	2014թ	2015թ	2016թ	2017թ
Զուտ շահույթը	671 633	161 696	50 674	195 874	889 356
Շահութաբաժինների վճարմանն ուղղվող գումարը	102 260	105 000	80 000	153 390	306 780
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	32. 84	7.91	2.48	9.58	43.49

Նախատեսվում է 2018թ. շահութաբաժինների վճարման համար օգտագործել 100 000 հազ.դր.:

Գլխավոր տնօրեն Դարույր Հակոբյան

Կատարող Զորիկ Վարդանյան
հեռ./012/ 21 11 11 (138)